



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



17569-  
17579



8670

1012  
X5-7

2010

370.1

1F-34

s 2 u s

1-8

# ԿՐԹԵԼՈՒ ՎՐԵՅ

ԴՐԵՅ ԲԵՐԻԶԻ ԱՆՈՒՆ

ԵՊԻՍԿՈՊՈՍԸ

ԹԵՐԴՄԱՆԵՅ ԵՒ ՏՊԵՅ

ՑՈՎՀ. ԳՐ. ՏԵՐՈՅԵՆՑ



Printed in Turkey

1858

Ե ԿՈՍՏԱԴԻՆՈՒՊՈԼԻՍ  
Յ-ՏԵՐՈՅԵՆՑ  
ՔԵՊԵԶԻ ԽԱՆ



980

39

# ՏԱՐՅԱ

ԿՐԹԵԼՈՒ ՎՐԵՅ

## 1

Հաւատքն ու փորձը մէկէն մեզի կը սովորեցընեն որ մարդկային բնութիւնը ինքնին գէպ 'ի չարութեան կողմը հակում մ'ունի. եւ բարութեան մէջ հաստատ պահելու համար շարունակ յոքնիլ մը պէտք է:

Ուրեմն ծնողաց առաջին պարտականութիւնն է տղայքնին կանուխ սովորեցընել եւ վարժել առաքինութեան մրցումներուն, որ պակասաւոր եւ մեղանչական յօժարութիւններու դէմ շարունակ մէկ փրկարար գիմադրութիւն եւ հակառակութիւն մ'ունենան. առաւելապէս իրենց ծնողացը հըրամանին շուտով. եւ պարզապէս հնազանդ եւ հպատակ գտնուելու վարժուելով:



13

2001

Բայց մենք ի՞նչ կը տեսնենք։ Վնանկ  
 ծնողքներ, որ նորահաս տղայութեան ա-  
 խորժակներուն եւ կամքերուն եւ մտացա-  
 ծին հաճոյքներուն անդամ՝ մասնաւոր նկա-  
 տում մ'ունին, չէ՛թէ անոնք զսպելու կամ  
 կարգի մը ներքեւ խօթելու, այլ առանց  
 չափոյ անոնց ուզածը կատարելու համար։  
 Վնանկ հայրեր են ասոնք՝ որ կուղէն ամէն  
 բան իրենց անողոքելի լուծին տակը ընկ-  
 ձել. բայց իրենք ալ կամ մեղկութեամբ  
 կամ անհամբեր ըլլալով խօսք չհասկըցող  
 զաւակներնուն կամակոր աղաղակին եւ լա-  
 լուն եւ պուալուն կը խօնարհին։ Վայրե-  
 րը իրենց զաւակներուն չէ՛թէ ստոյգ պի-  
 տոյիցը եւ օրինաւոր կամքերնուն, այլ սը-  
 նոտի հաճոյքներնուն եւ վտանգաւոր սնա-  
 փառութիւններնուն եւ պերճասիրութիւն-  
 ներնուն գերի կ'ըլլան. եւ իրենց եվելկեկ  
 անձնասէր գթովը կուրանալով՝ զաւակնին  
 ապագայ խեղճութենէն աղատ պահելու  
 համար՝ անոր անհաճոյ բան մ'ընելու կըտ-  
 րիճութիւնը չեն ունենար. եւ արդեօք աս-  
 կէց աւելին ալ ըսե՞նք. իրենց անուղղելի  
 զաւկին ներկայութեանը անդամ՝ կը նեղա-  
 նան եւ կը զայրանան. չէ՛թէ տղուն, այլ ա-  
 նիկայ պատժող վարժապետին կամ յանդի-

(9)

մանող դաստիարակին հաստատութեանը  
դէմ։ Եմէն օր տեսածնիս ասիկայ չէ՞ մի։  
Եւ սուրբ գրոց պատմած ամբարտաւան եւ  
արհամարհոտ մարդիկը չէ՞ մի որ ասանկով  
առաջ կուգան, որ միշտ խռովայոյզ եւ ան-  
ընկճելի ըլլալով հոգեւորական պաշտօնեա-  
ներուն ջանքերնուն գործադրութեանը ա-  
ռաջը արգելք կը դնեն. ընկերութեան հի-  
մը կը խախտեն. եւ ամենէն առաջ՝ ընտա-  
նիքը սկոյ եւ տրտմութեան մէջ կ'ընկըշ-  
մեն։

Եւաղ, խեղճ ծնողքներ. ձեր յանցա-  
ւոր զաւակներուն քանի մի կաթիլ օդտա-  
կար արցունք ելլելը չէք ուզէր, որ շու-  
տովալ կը ցամքի. շատ ալէկ։ Բայց օր մը  
պիտի ըլլայ՝ որ ձեր աչքէն դառն եւ ան-  
ցամաքելի արցունք թափուելուն պատճառ-  
տալը ամենեւին հոգ պիտի չընէ։ Ենոնք  
պատժել չուզելնուդ անունը ծնողական գու-  
րով դրեր էք. շատ աղէկ. բայց հոգին սուրբ  
կըսէ թէ ասիկայ ատելութիւնէ. “որ խնայէ  
ի դաւազան՝ ատեայ զօրդի իւր,, : Երդարեւ  
անանկ է. պատշաճ ժամանակին զաւակը չը  
պատժելը՝ անիկայ ատել է. վասն զի անոր  
թշուառ ըլլալուն ճամբայ բանալ է, որով  
մարդկային կենաց արկածներուն համբեւ-

թելու անկարող կ'ըլլայ , եւ ժամանակէն առաջ՝ կիրքերու եւ մոլութիններու գերի կ'ըլլայ , որով անոնց երկաթէ շղթաներ կը պատրաստենք , որոնք խորտակելու համար ժամանակն անցնելէն ետքը պարապ տեղը պիտի աշխատիք :

Ետքը երբ որ մէկը ձեզի գայ ըսէ թէ զաւ ակնիդ՝ որն որ կուռքի մը պէս կը պաշտէիք , ինքը զի՞նք գայթակղութեան ճամբու մը մէջ ձգեր է , եւ ձեր անուանը աղտ կը բերէ . երբ որ ձեր երեւակայած անուշիկ երազներնէդ կարթննաք , եւ ձեր աչքովը կը տեսնէք եւ ձեռքովնիդ կը շափէք ըրած տնաւեր ծախքերը եւ ամօթալի զեղխութիւնները , վերջապէս այն ատենը՝ պատիւնիդ եւ խիղճերնիդ կորսուած ալ ըլլայ նէ՝ ձեր բուն անձնական շահը մը տածելնիդ անիկայ յանդիմաննելու պիտի ըստիպէ զձեզ : Ի՞այց թէ որ այն ժամանակը ձեր ձայնը չճանչնայ , թէ որ ձեր ըրած յանդիմանութիւնը բանի տեղ չըդընէ , թէ որ ձեր պատուէրներուն եւ սպառնալիքներուն վրայ ծիծաղի , չէ՞մի որ յանցանքը ձեզի պիտի գտնէք : Իուք չէ՞ք մի որ առաջկուց ձեր զէնքը անոր առաջը ձգած էք անոր սովորեցընելով , որ զի՞նքը ձեզի

տէր չըկարծէ ալ նէ՝ ձեզի հաւասար կարծէ :

Կ՞նչ կըսէք . իր պըզտիկ տղայութեան ատենէն 'ի վեր , ձեր կամքը իրեն կամքին հպատակ տեսած ըլլալէն ետքը կը կարծէք՝ որ տարիքին բերմունքէն եռացած եւ անկախութեան աշխուժովը յափշտակուած ատենը՝ որուն զօրութիւնը դուք աւելցուցած էք , մէկէն 'ի մէկ ձեր խօսքը մըտիկ ընէ եւ իր ճամբէն ետ կենայ : ||

Եներկբայելի է որ ձեր առաջը խոնարհիլը ամէն ատեն անոր պարտականութիւնն է . եւ սուրբ գրոց խօսքն է որ՝ ծնողական իրաւունքը չճանչցող զաւակը միշտ մեղապարտ եւ անմիտ ալ է . բայց դուք էք որ ձեր մեղկ եւ կեղծ առաջնորդութեամբը անոր խելքը կորսուելուն եւ յիմարութեան մէջ իյնալուն պատճառ եղեր էք :

Կըսէք որ տղայքը կառավարել հիմայ անհնար եղած է : «Ա:ախ եւ առաջ՝ ասանկ անհնարութեան մը մնք չեմք հաւատար : Որովհետեւ ձեր զաւակները աղեկ ճամբու մէջ բոնելը ձեր ճիշդ պարտականութիւնն է . ստոյգ է , եւ հաւատքըն ալ այնպէս կը սովորեցընէ որ՝ ասոր բաւական ըլլալու չափ շնորհք առած էք

Աստուծմէ . Եւ հիմայ ալ՝ թէ՛ եւ անհնազանդութեան եւ անձնասիրութեան ոգին տիրած է աշխարհքիս վրայ , անանկ հայրեր եւ անանկ մայրեր գիտեմք որ իրենց տղաքնու աղջիկները իրենց ամեն հասակին եւ ամէն բանի մէջ անոնք կը յարդեն եւ անոնց կը հնազանդին : Աակայն այն ալյայտնի է , որ այս հնազանդութիւնը եւ յարդանքը դժուար կը պահուին սրտին յարուցած մըրը րիկներուն , եւ իր անձնական կամացը պատճառած գրգռութիւններուն մէջ , թէ որ սկիզբէն ասոնք չըճանչնալը եւ չըհնազանդիլը սովորութիւն եղած են նէ :

Եւ այսպէս , ձեր զաւակներուն տղայութեան տարիքին վրայ ձեր իշխանութիւնը պահելու եւ բանեցընելու համար պէտք է մեծապէս փոյթ ունենալ նախ եւ առաջ արթնութիւնով եւ ժրութիւնով անոնք շարունակ հաստատուն կարգի կանոնի տակ պահել , սուրբ գիրքն ալ կըսէ թէ կենաց ճամբան այս է : “ Ճանապարհ կենաց՝ յանդիմանութիւն եւ խրատ , , (առակ . զ . 23) :

Դուցէ շատ ծնողքներուն մտքէն մեղի  
 սա պատասխանը տալ անցնի, թէ առաջկու  
 ըրած դիառղութիւննիս իրենց չվերաբերիր +  
 որովհետեւ իրենց տղոցը նկատմամբ խիստ  
 են, եւ յանցանքներնուն բնաւ չեն ներեր:  
 Ծիրաւի շատ անդամ այդ ճշմարիտ է. եր-  
 բեմն չափէն ալ աւելի. բայց այն բաներուն  
 վրայ՝ որ ձեր անձինը կը վերաբերի. ձեր  
 շահերուն եւ ամբարտաւանութեանը կամ ան-  
 կանոն ախորժակներուն կը դպչի: Այն ա-  
 տենը ձեր զաւակներուն ստոյդ յանցանքնե-  
 րը չըներելէն զատ՝ անոնց թեթեւութիւնը  
 եւ դանդաղութիւնը եւ տկարութիւնն ալ չէք  
 ներեր: Բայց երբ որ իրենց ճշմարիտ շա-  
 հուն. եւ մանաւանդ Աստուծոյ անոնց սրտին  
 վրայ՝ ունեցած տիրական իրաւանցը շահուն  
 վերաբերեալ բան մը ըլլայ նէ՝ այն ատեննն ալ  
 ասանկ կ'ընէք արդեօք: Դիտեմ. անհմտու-  
 թեան համար անկատար մնացած գործի մը  
 վրայ, անզգուշութեամբ կոտրուած բանի մը  
 վրայ բարկութիւննիդ վերջին աստիճանը

(14)(

կը հասնի . բայց հոգւոյ փրկութեան գործը բոլորովին խախտած ու կործանած տեսնելնիդ չըկրնար պատճառ ըլլալ որ մէկ անկեղծ ցաւ մը ցուցընէք եւ զօրաւոր յանդիմանութիւն մը խօսիք :

Յիրաւի . ոմանք իրենց զաւակները անոնց խիստ պըզտիկ տարիքներէն սկսելով ծառայաբար աշխատելու վարժելը զիտեն . որ ժամանակէն առաջ ուժերնին եւ անձերնին կը մաշեցընէ . եւ մշտնջենաւոր տըկարութեան մէջ կը ձգէ թէ՛ մտքի եւ թէ՛ մարմնոյ կողմանէ . բայց անկէց մէկ վարձք մը պիտի վաստըկին : Ի՞այց երբ քրիստոնէութեան գլխաւոր պարտականութիւննին կատարելու գայ , որով անմեղութիւննին եւ արժանապատուութիւննին անարատ կը մնայ . եւ ներքին խաղաղութեան եւ Աստուածային շնորհաց գանձը կը ստանան , այն ատենը աչքերը գոց եւ սիրտերը անհոգ կը գտնուին :

Ի՞նչ կ'ըսեմ կոր . անանկ թշուառական ծնողքներ ալ չե՞ն մի գըտնուկիր արդեօք , որ այդ անհոգութիւնը մինչեւ չըկամութեան կը հասցընեն : Եւ իրենց զաւակը քրիստոնէական բարեպաշտութեան գործերուն առաջնորդելու տեղը յայտնապէս անկէց ետ

(15)

կը կեցընեն . յաճախ խոստովանելու եւ հա-  
ղորդելու սուրբ սովորութիւնը կ'արհամար-  
հեն եւ անկէց կը հեռանան . եւ դիւական  
ամբարտաւանութիւնով մը աւելի կախորժեն  
իրենց զաւակը զեղխութեան մէջ ինկած-  
տեսնել , քան թէ ջերմեռանդ եւ բարեպաշտ :

Օարմանալի՛ կուրութիւն , որ մեզի երկ-  
նառաք պատիժ մը կերեւի այն թուլամորթ  
քրիստոնեաներուն վրայ հասած , որ իրենց  
հաւատքը յայտնի համարձակ ուրանալու չեն  
համարձակիր . բայց անոնց պատուերը պա-  
հելու ալ ո՛րքան հնար է նէ քիչ կը հետեւին ,  
եւ Աստուծոյ կողմը պէտք եղածին չափ չըւ-  
լալուն համար Աստուծոյ հակառակ կողմը կը  
դտնուին . այն անստելի պատղամին համե-  
մատ . որ ըսաւ , “ որ ո՛չ ընդ իս է՝ հակա-  
ռակ իմէ , , (մատթ . ՃԲ . 30):

Կոյր ծնողքներ . չէք ուզեր որ զա-  
ւակնիս բարեպաշտական գործերու մէջ  
դտնուի . ձեր հոգեւոր առաջնորդներուն ձե-  
զի խօսածները եւ կրկնածները հասկընալ  
չէք ուզեր . որ կըսեն թէ՝ աշխարհքիս  
մէջ գէշութիւնը ո՛րքան շատնայ նէ՝ այնքան  
աւելի նախապահնեստ դեղերը շատցըն ելու-  
է , եւ այն բանն որ ասկէց յիսուն տարի ա-  
ռաջ բարուց պարզութեանը եւ ցանկութեան

չափաւորութեանը համար աւելորդ կը սեպուէր . հիմակուան շռայլութեանը եւ ամբարտւանութեանը եւ անկարգութեան դաղափարներուն նայելով՝ որ ամէնուն հսկին կը տագնապին ամէնէն խաղաղ եւ հանդարա հիւղերուն մէջն անգամ, այն ատենօք աւելորդ սեպուած բաները հիմայ ամենահարկաւոր եղած են : Առգւց արթուն հովիւները հիմայ նոր միջոցներու ձեռք զարկած են նէ՝ անոր համար է որ ետեւէ ետեւ անըթիւ նորելուկ բաներ կելլին մարդկային հոգին կորստեան ճամբան տանելու արուեստին մէջ : Բայց ասանկ ճշմարիտ եւ խոհական խրատներ ձերքի տրուելն ալ անօգուտ է . մտիկ չէք ըներ, եւ ձեր անձնական ամենակարեւոր շահուն գեմ կենալով՝ ձեր զաւակներուն վրայ բարեպաշտութիւն եւ ջերմեռանդութիւն տեսնել չէք ուզեր : Վատաղէկ . ատոր պատիժը այս աշխարհքիւ մէջէն պիտի սկսիք քաշելու . զեղիսութիւն պիտի ունենաք իր ամէն խայտառակութիւններովը եւ նախատինքներովը . ապերախտութիւն՝ իր ամէն դպիտանութիւններովը . եւ վարուց անկարգութիւն՝ ամէն անաւեր հետեւանքներովը :

Բայց այս ըսելու է որ՝ տղաց հոգեւոր  
բարւոյն վրայօք ծնողաց անհոգութիւնը  
քիչ անդամ կը պատահի որ մինչեւ այս աս-  
տիճան հասնի։ Կան որ՝ իրենց կրօնական  
պարտաւորութիւննին կարգաւորաբար կը կա-  
տարեն. եւ կուզեն որ զաւակնին ալ միշտ  
անոնք կատարելու հաւատարիմ ըլլան։

Կուզէք որ ասանկ ըլլայ. բայց ուզած-  
ներնուգ հասնելու Համար ի՞նչ կ'ընէք.  
մանաւանդ մանկութեան հասակէն նոր ե-  
լած եւ պատանեկութեան մէջ մտած զաւակ-  
ներնուգ համար։ Արդեօք ասոր վրայօք ա-  
նոնց բան մը կը խօսիք։ Պէտք է անշուշտ՝  
այն հասակին մէջ զգուշութեամբ վարուիլ,  
պատեհ ժամանակի նայիլ. որպես զի անոնց  
անձնասիրութեանը չըդպչուի եւ հակառա-  
կութեան պատճառ չըտրուի։ Բայց ձեր տը-  
ղոցը այն ալ հարկ է դիտնալ յայտնապէս՝ որ  
ձեր փափաքը եւ կամքը այս է. եւ թէ ա-  
սիկայ անանկ պարտականութիւն մըն է՝ ու-  
րուն աւելի ուշադրութիւն կ'ընէք. եւ թէ  
որ ասիկայ չըկատարելու ըլլան նէ շատ կը  
տրտմիք, ասանկ ըլլալը գիտե՞ն. գոնէ կար-  
ծիքով. եւ ձեր ասանկ նիւթոյ մը վրայ խօ-  
սելնուգ եղանակէն կը քննա՞ն արդեօք գու-  
շակել թէ կամքերնիք. եւ փափաքնիդ այս է։

Յատակ խօսքով եւ ձեր կողմէն ներքին համոզում մը ցուցընելով այսպէս բան մը անոնց ապրապրա՞ծ էք մի . ինչպէս որ ձեր ուրիշ կամքը եւ փափաքը անոնց յայտնելու համար կընէք : Ա անաւանդ ասոր հակառակ , անանկ բանի վրայ խօսած ատեննիդ տարտարմութիւն մը եւ կասկած եւ երկբայութիւն յայտնելու կերպ մը չէ՞ք մի բռնած . ասոնք անտարբերութենէն ծնած ըլլալով իրենցմէ ծնանելիքն ալ նոյն անտարբերութիւնն ու անհոգութիւնն է : Ա տածեցէ՞ք թէ այդպիսի զրուցուածք մը Աստուծոյ առաջ քանիի՞ կարժէ :

Ճեղի քահանայապետն ալ ձեզի պէս , գուցէ ձեզնէ ալ աւելի՝ իր զաւակները խրատեր էր Աստուծոյ ծառայութեան մէջ ըրած օրինազանցութիւններնուն համար . գորովալից ու բարեպաշտ լեզուով անոնք յորդորեր էր՝ որ մէկ մըն ալ այնպէս պարսաւելի բաներ չընեն . բայց այն ալ ձեզի պէս ըրած էր , խօսքին ուժ չտալով , տարտամութեամբ եւ չէր կրցած իրեն մեղանչական ներողամբ տութիւնը յայլթել : Ա արդարէն ալ Աստուծոյ կողմէն դալով այս յանցանքը անոր երեսին տուաւ . ասոր համար երկու տղայքը մէկ օրուան մէջ մեռան . իր ցեղը պա-

(19)(

տիւէն ինկաւ եւ նղովքի տակ մնաց . ինքն  
ալ սրտին կըսկիծ էն մեռաւ : Աղէկ մտիկ ը-  
րէք սիրելի՛ եղբարք , այս ահաւոր պատու-  
հասներուն պատճառն ի՞նչէր . Աստուած  
ինքը կըսէ . քու զաւակներուդ հետ աւելի  
խնայութեամբ վարուեցար , քանթէ ինծի  
հետ . “ Փառաւորեցեր զորդիսն քո քան  
զիս , , (Ա . Թագ . Բ . 29 ) : Ճշմարտա-  
պէս հաստատուն համոզումէ պատճառած  
հեղինակութիւնովը , եւ սիրոյ պատճառած  
ճշմարիտ երկիւղին տուած ուժովը անոնց  
հետ խօսելու վախցար . բայց անոնց չար  
օրինակէն ծագած վտանգաւոր ազդեցու-  
թիւններէն եւ ամբարիշտ խօսքերէն չըվախ-  
ցար : Ա ախցար որ տրտունջ կ'ընեն , կամ  
սրտերնին կը նեղանայ . բայց անոնց հո-  
գին դատապարտութեան տակ ձգելէն՝ եւ  
իմ պատուհասիչ արդարութիւնս դրդուելէն  
չըվախցար : “ Փառաւորեցեր զորդիսն քո  
քան զիս , , : Հայրեր . մայրեր . ձեր ը-  
րածն ալ այս չէ՞ մի :

Ի՞այց արդեօք ոմանք իրենց պարտա-  
կանութիւննին մոռնալուն չափը անցուցած  
չե՞ն մի : Երդեօք ձեր մէջ այն անարժան  
ծնողքներէն չե՞ն մի գտնուիր սիրելի՛ եղ-  
բարք , որոց օրինակները իրենց դիւրահաւան  
եւ սովորաբար ուրիշներուն նմանող ըլլալու  
յօժար զաւակներնուն դէշ դայթակղութիւն  
եղած են . որկէց այն տղաքը չեն կրնար  
խորշիլ . եւ ասով այն դայթակղութիւնները  
ծանր յանցանքի կարգ կը մտնեն :

Աշէկ գիտէք սի՞րելիք , որ տղայքը օ-  
րինակով կը յառաջանան . մէկուն ընելը կը  
տեսնեն՝ եւ իրենք ալ կընեն . ըսելը կը լը-  
սեն՝ եւ իրենք ալ նոյնը կընեն : Եյն ալ ա-  
ռանց տրամաբանելու , առանց մոտածելու ,  
եւ չխորհելով ալ թէ ըրածնին ի՞նչ է :

(Օրինակին այսպիսի իշխանութիւնը ա-  
ւելի զօրաւոր կ'ըլլայ երբ այնպիսի ան-  
ձինքներէ կուգայ՝ որոց հետ տղայք շարու-  
նակ եւ հարկաւոր հնազանդութեան կապով  
կապուած են : Անոնցմէ կը սովորի իր մայ-

բական լեզուն՝ սովորելուն ալ միտ չըդնելով. իր ունեցած տեղեկութիւններն ալ՝ ախորժակներն ամէն քանի մէջ ստացած ունակութիւններն ալ անոնցմէ կառնէ, աղէկն ու գէշը չըզատելով։ Այ էտք է որ նորէն կըրկնեմք. որովհետեւ այս նիւթոյս մէջ ծանրակշիռ խորհրդակցութիւն մըն է ասիկայ. ո՛րքան որ այս բաներս իրեն չար միտումներուն համեմատ կուգայ՝ այնքան դիւրաւ կընդունի։

Ես անհակառակելի խորհրդած ութիւններուն վրայ դատեցէ՛ք սիրելի եղբարք, թէ ծնողաց գայթակղեցուցիչ գործերը անոնց զաւակներուն վրայ ո՛ր աստիճան աղդեցութիւն կընեն։

Աերեցէ՛ք մեզի քրիստոնեայ ծնողքներ՝ որ ձեր ազնիւ կոչմանը արժանաւոր է՛ք, ներեցէ՛ք մեզի այս ամըչթընող խօսքերը՝ որոնք մարդ ձեր վրայ չըհասկընար. այլինչպէս որ դրուած է՝ բժիշկը հիւանդին. եւ հովիւը հօտէն զատուած ու մոլորած ոչ խարինէ համար է։

Ուրեմն ներեցէ՛ք մեզի որ աղատօրէն խօսիմք մեր պարտքէն աղատելու եւ խիղձերնիս հանդարտեցընելու համար. ճշմարիտ է որ շատ ընտանեաց մէջ տղայոց հա-

(22)(

մար յայտնի դայթակղութիւններ կան, որ  
անոնց ուղղակի վտանգ կը բերեն:

Խօսքի դայթակղութիւն, թէ՛ չարաբա-  
նութիւնով եւ թէ հայհոյութիւնով, թէ՛  
դայթակղեցուցիչ պատմութիւններով եւ  
թէ՛ աղտեղի ծաղթաբանութիւններով. թէ՛  
կրօնքի դէմ խօսելով եւ թէ կրօնից պաշ-  
տօնեաները բամբասելով եւ անուննին աւ-  
րելով: Տղան մտիկ կը նէ. միտքը կը պա-  
հէ. եւ ինքն ալ նոյնը կը խօսի: Ասանկով  
իր մատղաշ հասակէն միտքը կը մոլորի եւ  
բերանը կ'աւրուի:

Օրինազանցութեա՞ն դայթակղութիւն:  
Ա ենք ձեր տղոցը կը սովը եցընեմք թէ ի-  
րենց սրբազն պարտականութիւն մըն է  
Էստուծոյ եւ եկեղեցւոյ օրէնքները պահե-  
լը. եւ դուք էք որ անոնք մեղի կը խըս-  
կէք, որպէս զի այդ հիմնական ծշմարտու-  
թիւնները անոնց մտքին մէջ խօթեմք եւ  
աղէկ մը տպաւորեմք: Ա ակայն այդ սուրբ  
պատուիրանքներուն հակառակը անոնց աչքին  
առաջը գործողն ալ դուք էք. եւ շատ ան-  
դամ ամբարշտութեամք ծաղթելով, եւ ի՞նչ  
կ'ըլլայ եղեր ըսելով պահոց օրէնքը կաւ-  
րէք, եւ կիրակի օրը սուրբ չէք պահեք:

Անխօնիմութեան եւ դէշ վարուց դայ-

թակղութիւն։ Ո՞րքան հայրեր, ո՞րքան  
մայրեր, իրենց զաւակներնուն առաջ բնաւ  
չեն զգուշանար. գուցէ կը կարծեն որ՝ տը-  
ղայքը Խիստ պըղտիկ ըլլալնուն չեն հաս-  
կընար, կամ խելքերնին չըհաւնելովը մըտ-  
քերնին ալ չեն պահեր։ Չեն ուզեր միտք  
առնել, որ գէշ բանի մը համար անոնց ի-  
մացողութիւնը կանուխ կ'արթըննայ, եւ  
ճարպիկ հետաքրքրութիւն ունին. եւ այս  
կերպով անոնց մատղաշ մտքերնուն մեջէն  
կ'աւրեն կը ջնջեն այն անմեղութիւնն ու  
տղիտութիւնը՝ որ զիրենք մոլութենէ կը  
պահպանէ, եւ օղջախոհ վախկոտութիւնը՝  
որ գէշութենէ կը հեռացընէ։

Օ աստուած մոռնալու գայթակղութիւն։  
Ո՞չ, սիրելի եղբարք. գուցէ ձեզ ամէնէն  
աւելի վախցընողը ասիկայ չէ. սակայն  
տղայոց հողւոյ փրկութեան եւ երջանկու-  
թեան ամէնէն աւելի խորին եւ ծանր վը-  
նաս տուղը ասիկայ է։

Ո՞վ մեզ այն ժամանակներուն կը տա-  
նի, որ ամէն ընտանիք մէկ մէկ եկեղեցիի  
կը նմանէին, որոց մէջ կարդաւորաբար հա-  
սարակաց աղօթք կը զբուցուէր, որով ա-  
մէնուն սիրտը ՅԱստուած կը միանար. եւ  
բարեպաշտական զըքեր կը կարդային, ու-

բով ամէնուն՝ խորհուրդը կորստական բաներէ կը զատէր, եւ երկինքը կը վերցընէր:

Հիմայ ո՞րքան տուներ կան՝ ուր մէկը չլկայ որ ծունը կրկնէ եւ աղօթք ընէ. ուր հայրը միայն իր անասնական մարմնաւոր հաճոյքը յադեցընելով զբաղած է. իրիկունը կը պառկի՝ առտուանց կելլէ. ուր ընտանիքը մէկ տեղ ժողվելով բան մը չեն կարդար. գուցէ կարդան ալնէ՝ բարուց ապականութիւն տուող եւ կիրք արթընցընող կեղծ պատմութիւններ եւ օրադիրներու բանասիրականներ կը կարդան։ Ուր տեղ Աստուածային մտածմունքներու եւ հոգւոյ փրկութեան շահերու եւ քրիստոնէավայել կենաց վրայօք ամենեւին խօսք չըլլար. ամէն խօսակցութիւնները՝ մէկ բառ մըն ալդուրս չառնելով, աշխարհային բաներու եւ ստակի եւ զգայական հեշտութիւններու վըրայ են :

Ի՞նչպէս կրնայ ըլլալ որ ասանկ թանձրու կոշտ ազդեցութիւններու տակ ինկած տղան բոլորովին մարմին չըլլայ. եւ Աստուծոյ ձեռօք հոգւոյն մէջ ցանուած հոգեւոր կենաց սերմը՝ որ միայն ծըլլու կարօտ էր՝ միշտ չըմիլտափ եւ չըկորսուի։ Եսոր համար է որ հոգեւոր հովիւնները շատ

մեծ աշխատութիւն կը քաշեն կրկին եւ կը ք-  
կին խրատներով եւ իրենց հոգեւոր նախան-  
ձուն թելադրած բոլոր միջոցներովը այդ  
ծանրացած էակները վեր վերցընելու, եւ  
յափտենական ճշմարտութիւնը քիչ մը ա-  
նոնց հասկըցընելու եւ ախորժելի ընելու :

Եհա՛ սիրելի՛ եղբարք, ասոնք են  
են այն դայթակղութիւններուն մէկ քա-  
ռին ասոնք են, որոց վրայ կողբամք ձեր մէ-  
ջը. եւ մենք ո՛րքան տագնապ եւ վիշտ  
կը կրեմք արդեօք՝ մեր այս պարտականու-  
թիւնը կատարելու ժամանակնիս. Ընորհք  
ըրէք հայրեր, մայրեր, մեզի պատճառած  
վշտալի վիճակնիդ ի՞նչ ծանր ըլլալը հա-  
կըցէք :

Ո՞ ենք կըսեմք ձեր զաւակներուն, եւ  
ըսել ալ պարտքերնիս է, որ ձեզի հնա-  
զանդին եւ ձեզ սիրեն. բայց անոնք ձեր  
վրայ անանկ գործեր կը տեսնեն, որոնց  
համար մենք անոնց սովորեցուցած եմք թէ  
պարսաւելի եւ անարդութեան արժանի բա-  
ներ են. Ի՞նչ ընէ հիմայ խեղձը. ի՞նչ  
խորհի. երկար ատեն ձեզ յարգէ՞ եւ ձեզի  
հնազանդի: Չէ՞ք վախնար արդեօք. չըլլայ  
որ շատ ժամանակ չանցած սկսանի արհա-  
մարհել կամ վարքերնիդ կամ իրեն տուած  
խրատներնիդ, կտմ երկուքը մէկէն.

Զէ՞ աղէկ գիտեմք . եւ չըզիտնալիք  
 չեմք ըներ . բան մը չըկայ աշխարհքի մէջ  
 որ տղու մը իրաւունք տայ իրեն հօրը պէտք  
 եղած յարդանքէն եւ հնազանդութենէն ետ  
 կենալու . եւ յայտնապէս ալ կըսեմք . որ-  
 պէս զի ասանկները այս հոգեւոր հովուա-  
 կան ազդեցութիւններէն իրենց անհնա-  
 զանդութիւնն արդարացընելու իրաւունք մը  
 կտած չըլլան : Տը՝ ղայք . ի՞նչ տարիքի կ'ըլ-  
 լաք նէ ըլլաք , ձեր հօրը եւ մօրը վարքը  
 ինչ որ են նէ՝ անոնց դատաւորը դուք չէք .  
 ուստի անոնք բամբասող եւ պարաւոլ ալ  
 չէք կրնար ըլլալ բնաւ : Եփսո՞ս եւ վայ-  
 ձեղի՝ թէ որ անոնց զզալի պակասութիւն-  
 նին անդամ զանոնք նախատելու եւ վրանին  
 ինդալու պատճառ բըռնէք : Ա ախցէք եւ  
 սոսկացէք . չըլլայ որ Վամայ եւ անոր զա-  
 ակներուն վրայ եկած անէծքը ձեր վրայ  
 ալ զայ : Ուէ որ հայրերնիդ ինքը զինքը  
 այն աստիճան մոռնայ՝ որ իր յարդը իր ոտ-  
 քին տակն առնէ , անոր վրայ ցաւեցէք .  
 անոր համար աղօթք ըրէք . գուցէ կրնաք  
 ալ անոր խրատ տալ . բայց ողբան որ կըր-  
 նաք՝ նահապետին օրհնեալ զաւակներուն  
 պէս դուք ալ երեսնիդ անդին դարձուցէք .  
 անոր պակսութեանը աչքերնիդ մի՛ տըն-

կէք . անոնք մի' յամըցընէք . խոշիմութեան եւ որդիական սիրոյ վերարկունիդ վըրան ձգեցէք :

Ծայց յայտնի չէ մի սիրելի' եղբարք , որ այս ընտանի գայթակղութիւնները զէնքերնիս ձեռքէ ձգել կուտան , եւ մեղ կը վշտացընեն : Աշ ի՞նչպէս ասանկ պիտի չըւլայ : Ա ենք ձեր տղոց մոլութիւնները վերցընելու կընայինք . ձեր ըրածները ամէնն ալ անոնց քաջալերութիւն կուտայ : Ա ենք անոնց կապըսպէեմք որ Աստուծոյ համար ապրին . դուք անոնք աշխարհքի համար կը մեծցընէք : Օորօրինակ . մենք կուզեմք որ ձեր աղջիկները պարկեշտութեան եւ քրիստոնէական պարզութեան մէջ մնան . իսկ դուք՝ կոյր մայրեր . կուզէք որ հին ատենուան հեթանոսներուն աղջիկներուն պէս կուոքերուն ման զարդարուին եւ անով փքանան : Ա ենք մեր հովուական խնամոց թելաղբած ամէն հնարքը 'ի գործ կը դնեմք . որ պէս զի ձեր զաւակները այն խաբերայ կիրքերէն պահպանեմք 'որ իրենց քաղցր կ'երեւին եւ կը հեշտացընեն . սակայն կ'ապահանեն եւ անասունի նման կընեն : Իսկ դուք զանոնք յամառութեամք այն բորբոքեալ կը բակին մօտեցընելու կը նայիք , չետելնիդ կը

տանիք, եւ կը բռնադատէք ալ երթալու այն գարշելի տեղերը՝ ուր անխորհուրդ մարդոց բազմութիւն կը ժողվուին. եւ ասով սուրբ գրոց ըսածին պէս ձեր զաւակը ձեր ձեռքով վը գեւերուն կը զոհէք:

Եփսո՞ս որ շատ անգամ ձեր աղետալի մըղումն է որուն հնազանդիլ կուղեն. չէ թէ ձեր խրատներուն խելվընին հասնելով. սակայն սուրբ գրքին մէկ խօսքն ալ մահկ ըրէք. մեղաւորներուն զաւակները որ ամբարիշտներուն տուները կը յաճախեն, գարշութեան զաւակներ են:

Դիտէք սիրելիք, մեզի ո՞րքան ծանր է այս ահաւոր խորհրդածութիւններուն վրայ խօսքերնիս երկնցընելը. եւ այս ալ առաւել անոր համար՝ որ ուղղակի ձեր վրայ յարմարելու խօսքեր չեն: Իսյց այսպիսի գայթակղութիւնները որքան քիչ ալ որ ըլլան՝ չէ մի որ մեզի դառն ցաւերու պատճառ, եւ ձեզ խրատելու եւ անոնցմէ զգուշացընելու առիթ կ'ըլլան:











